ՀԱՅԱՍՏԱՆԸ ԴԵՄ Է

ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆԸ

1994 թվականի հոկտեմբերի 20–ին անգլերեն լեզվով լույս տեսնող թուրքական «TDN» («Թուրքիշ դեյլի նյուս») օրաթերթը, վկայակոչելով Անատոլիայի լրատվական գործակալությունը, հաղորդել է, որ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Վահան Փափազյանը հայտարարել է, որ Երեւանը առարկում է Ղարաբաղի միջազգային խաղաղարար ուժերում թուրքական զորքերի մասնակցության դեմ: Հոկտեմբերի 19–ին նա հայտարարել է. «Տվյալ պահին Հայաստանի եւ Ղարաբաղի համար անընդունելի է խաղաղարար ուժերում թուրքական զորքերի ընդգրկումը, քանի որ մենք Թուրքիայի հետ դիվանագիտական կապեր չունենք , եւ նա այս հարցում (ղարաբաղյան, «ՆՏ») անկողմնակալ չէ: Սակայն, եթե Թուրքիան փոխի իր դիրքորոշումը, մենք կվերանայենք նաեւ մերը»,– նշել է Վ.Փափազյանը: Նա ասել է նաեւ, որ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ սահմանը պետք է բացվի: «Որոշումն ընդունվել է երեք տարի առաջ: Այն ժամանակ Թուրքիան ճանաչեց մեր անկախությունը, սակայն երկու երկրների միջեւ դիվանագիտական կապեր չեն հաստատվել: Ես այդ հարցի վերաբերյալ խոսել եմ Թուրքիայի արտաքին գործերի նախկին նախարար Հիքմեթ Չեթինի հետ, եւ նա դրան դեմ չէր: Երեք տարի առաջ ավելի դյուրին կլիներ դիվանագիտական հարաբերություններ հաստատել»,– հայտարարել է Վ.Փափազյանը: Հիշատակելով անցյալ ամիս Նյու–Յորքում Թուրքիայի արտաքին գործերի նախարար Մումթազ Սոյսալի հետ տեղի ունեցած իր հանդիպման մասին, Հայաստանի արտաքին գործերի նախարարը ասել է. «... Մենք պրն.Սոյսալի հետ մի շարք հարցերի շուրջ եզրակացություններ ենք արել: Ղարաբաղում հրադադարը, որը շարունակվում է արդեն 5 ամիս, տարածաշրջանի համար բարենպաստ հանգամանք է: Բայց դա բավական չէ: Հրադադարը միայն առաջին քայլն է: Մենք մտադիր չենք «սառեցնել» հրադադարի ժամանակահատվածը, դա վերաբերում է Ադրբեջանին: Այնտեղ ներկայումս պատերազմ չկա, սակայն չկա նաեւ խաղաղություն»: Լրագրողների հետ զրույցի ժամանակ Վ.Փափազյանն ասել է. «Սակայն Թուրքիան ձեռնարկել է քայլեր, որոնք ղարաբաղյան հարցում որոշ խնդիրներ են ստեղծել: Առայժմ սահմանը մնում է փակ, դժվար է ձեւացնել, թե իբր Թուրքիայի հետ հարաբերություններում լարվածություն գոյություն չունի: Մենք արել ենք այն ամենը, ինչ կարողացել ենք: Ես չեմ խոսում պատմական վեճերի մասին: Ես այդ վեճերը օրակարգ չեմ մտցնի: Այդ վեճերը ոչ թե քաղաքական, այլ պատմական են: Այժմ մենք սպասում ենք Թուրքիայի կողմից գործողությունների»,– ասել է նա: Վ.Փափազյանը հայտնել է նաեւ, որ ղարաբաղյան հակամարտությունում որպես միջնորդ գործող Ռուսաստանի Դաշնության եւ ԵԱՀԿ–ի միջեւ գոյություն ունեն որոշ խնդիրներ: Հաճախ Հայաստանը ստիպված է եղել միջնորդների միջեւ միջնորդ դառնալ»,– նշել է նա: Վ.Փափազյանն ասել է, որ Երեւանի եւ Ղարաբաղի հայերի միջեւ ԵԱՀԿ զինված ուժերի տեղակայման հարցում գոյություն ունի կարծիքների տարաձայնություն: Թուրքական հասարակայնությունն ու կառավարությունը պետք է տեղյակ լինեն դրան: Նա նշել է նաեւ, որ որոշ երկրներ հատկապես հետաքրքրված են այդ տարածաշրջանով: Հարկավոր է մեծ զգուշությամբ հաշվի առնել շահերի հաշվեկշիռը, «սակայն այդ հաշվեկշիռը տարածաշրջանի երկրների համար չպետք է նոր խնդիրներ առաջացնի: Ռուսաստանի եւ, օրինակի համար, Թուրքիայի միջեւ խնդիրները չպետք է լուծել տարածաշրջանի՝ Հայաստանի եւ Ադրբեջանի, ժողովուրդներին դժվարին կացության մեջ դնելով: Հայաստանը չի նահանջի այն պատճառով, որ Թուրքիան, Եվրոպական միությունը կամ Ռուսաստանը շահագրգռված են այս տարածաշրջանով: Յուրաքանչյուր երկիր ունի իր սեփական շահերը, եւ մենք պատրաստ ենք պաշտպանել մեր շահերը»: Նա հայտարարել է նաեւ, որ Հայաստանը ոչ մի տեսակի կապեր չունի անօրինական ՔԲԿ–ի (Քրդական Բանվորական կուսակցություն) հետ: «Սակայն մեր երկրում կարող են լինել ինչ–որ խմբեր, որոնք կապեր ունեն ՔԲԿ–ի հետ: Չպետք է մոռանալ, որ մեր երկրում կան ազգային փոքրամասնություններ, այդ թվում նաեւ 50 հազ. քրդեր, եւ որ Հայաստանը ժողովրդավարական պետություն է: Մենք ՉԲԿ–ի հետ կապեր հաստատելու պատճառներ չունենք: Մենք չենք ցանկանում Թուրքիայի հետ հարաբերություններում նոր խնդիրներ ստեղծել: Մեր քաղաքականության նպատակը մեր բոլոր հարեւանների հետ լավ հարաբերություններ ունենալն է»,– եզրափակել է Վ.Փափազյանը:

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ